



**«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ**

**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑ**

**ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔ**

*Հետազոտության թեման՝ Ընթերցանությունը որպես գործիք*

*Առարկան՝ մայրենի*

*Հետազոտող ուսուցիչ՝ Վարդանյան Լուսինե Հրանտի*

*Ուսումնական հաստատություն՝ Երևանի հ. 132 հիմնական  
դպրոց*

**Երևան 2022**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### Ընթերցողական կարողությունների զարգացումը տարրական դասարաններում խաղի միջոցով

Ներածություն-----	3
Ընթերցողական հետաքրքրությունների ձևավորումը-----	5
Ի՞նչ գիրք ընթերցել-----	8
Խաղը որպես կրտսեր դարեցականի ճանաչողական հետաքրքրությունների խթանման միջոց-----	10
Ընթերցանության զարգացումը խաղի միջոցով-----	13
Եզրակացություն-----	19
Օգտագործած գրականություն-----	21

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ընթերցողական կարողությունների զարգացումը և ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն ձևավորելը շատ կարևոր և լուրջ աշխատանք է պահանջում:

Նրանք, ովքեր աշխատում են կրտսեր դպրոցականների հետ, գիտեն, թե ինչքան դժվար է զարգացնել երեխաների ընթերցանության տեխնիկան, առավել ևս՝ դաստիարակել ընթերցող անձ: Իսկական ընթերցանությունը, ըստ Մ. Ցվետսևայի, <<համագործակցությունն է արվեստում>>:

Ինչպե՞ս անել, որ երեխաները սիրեն ընթերցանության դասերը, որ ընթերցանության նկատմամբ հետաքրքրությունը չհանգչի: Եվ ի՞նչ անել, եթե կրտսեր դպրոցականները չեն ուզում կարդալ: Այս հարցերն այսօր մտահոգում են շատերին: Եվ սա բնական է, քանզի անհրաժեշտ է զարգացնել երեխայի միտքը, հուզական զգայունությունը, գեղագիտական պահանջմունքները և ընդունակությունները: Կարևորը՝ կարդալու կարողության ձևավորման գործընթացն այնպես կազմակերպելն է, որ նպաստի անհատի զարգացմանը, իսկ զարգացող անհատը ընթերցանության պահանջ ունենա:

Կարդալու կարողությունը անհրաժեշտ պայման է, որ կարդացողը գիտակցի տեքստի <<հետևում>> հեղինակի ներկայացրած աշխարհընկալումը, զգացմունքները, կյանքի նկատմամբ իր վերաբերմունքը: Կարևոր է օգնել ընթերցողին՝ կանգ չառնել փաստերի մտապահման վրա, այլ փնտրել նրանց տրամաբանությունը, պայմանավորվածությունը, պատճառականությունը: Այսպիսով, կձևավորվեն ընթերցելու կարողությունն ու գրագետ ընթերցողը:

**Թեմայի արդիականությունը:** Այսօր դպրոցում կարևոր է ընթերցանության նկատմամբ սեր և հետաքրքրություն ձևավորելը, քանի որ ընթերցանությունը հիմք է հանդիսանում բոլոր գիտություններից գիտելիքներ ձեռք բերելու համար: Եթե երեխան չսիրի ընթերցել, ապա ինչպես նա կարող է գիտելիքներ ձեռք բերել:

**Հետազոտման նպատակները:** Հետազոտման նպատակն է ձևավորել սեր և հետաքրքրություն դեպի ընթերցանությունը, զարգացնել ընթերցածը ճիշտ հասկանալու, վերարտադրելու և վերլուծելու կարողություն:

**Հետազոտման խնդիրները:**

1. Ներկայացնել ընթերցանության կարևորությունը կրտսեր դպրոցականների համար:
2. Ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն ձևավորելը խաղի միջոցով:
3. Ներկայացնել ընթերցողական կարողությունների զարգացման տեխնոլոգիան խաղի միջոցով:

**Հետազոտման առարկան:** Հետազոտման առարկան է ընթերցողական կարողությունների զարգացումը տարրական դասարաններում:

**Հետազոտման մեթոդալոգիական հիմքը:** Հետազոտման մեթոդալոգիական հիմքն են հանդիսացել մանկավարժների, լեզվաբանների՝ ընթերցանությանը նվիրված աշխատանքները, հետազոտությունները, գրքերը, ձեռնարկները, հոդվածները:

**Աշխատանքի տեսական նշանակությունը:** Աշխատանքի տեսական նշանակությունը ընթերցանության կարևորությունն է իր բաղադրամասերով, տեխնոլոգիաներով և այն ճիշտ ընտրելու և կազմակերպելու առաջարկումով և հիմնավորումով:

**Աշխատանքի գործնական նշանակությունը:** Աշխատանքի գործնական նշանակությունը կտեսնենք իմ առաջարկած մեթոդական հնարների, միջոցների՝ տարրական դասարաններում ընթերցանության կիրառման մեջ:

**Աշխատանքի կառուցվածքը և ծավալը:** Աշխատանքը կազմված է ներածությունից, հինգ ենթավերնագրերից, եզրակացությունից, օգտագործված գրականությունից: Ծավալը՝ 20 էջ:

ԸՆԹԵՐՑՈՂԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՏԱՐԴԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ  
ԽԱՂԻ ՄԻՋՈՑՈՎ

**Ընթերցողական հետաքրքրությունների ձևավորումը**

**Կարդալը հարստացնում է մարդու միտքը,**

**խոսելու մեջ վարժվելը, հաղորդակից է անում տրան, իսկ  
գրելը սովորեցնում է ճշգրտություն:**

**Մ. Նալբանդյան**

Հանրահայտ է, որ ընթերցանությունը ուսուցման հիմքն է: Կարդալու կարողության մակարդակով են պայմանավորված աշակերտի հիմնական հաջողություններն ու սովորելու ցանկությունը:

Ուսումնասիրությունները վկայում են, որ ընթերցանությունը <<միայնակ>> հանդես չի գալիս: Ընթերցասեր մանուկը, որպես կանոն, ունենում է մտակամային որոշակի որակների համալիր, որի յուրաքանչյուր բաղադրամաս կարևոր է և երեխաներին մղում է կարդալու: Օրինակ, ընթերցասեր երեխան, որպես կանոն, լինում է հետաքրքրասեր (ուզում է շատ բան իմանալ), ունենում է ինքնատիպ դիրքորոշում իր շուրջը կատարվող երևույթների նկատմամբ, սիրում է խոսել, արտահայտվել, պատմել, հակադրվել և այլն: Ընթերցասեր երեխաները <<նստակյաց>> են լինում, չեն սիրում բակ դուրս գալ, շարժուն խաղերով զբաղվել (սա խառնվածքի հարց է): Այս ամենը նշանակում է, որ առաջին հերթին անհրաժեշտ է ուշադրություն դարձնել երեխայի՝ վերը նշված (և չնշված) առանձնահատկությունների վրա:

Արդյո՞ք հնարավոր է այս խնդիրը լուծել վաղ դպրոցական տարիքում: Ե՛վ հնարավոր է, և՛ անհրաժեշտ:

Ուսուցիչը պետք է հիշի, որ ընթերցանությունը, որը պատճառաբանված է հետաքրքրաբնույթի և նպատակադրված հետաքրքրությամբ, մանկավարժորեն հատուկ նշանակություն ունի, քանի որ այն դառնում է երեխաների համար հաճելի և ցանկալի զբաղմունք: Առաջին հերթին անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել ընթերցողական

հետաքրքրության ձևավորմանը և գեղարվեստական տեքստի լիարժեք ընկալման կարողության զարգացման վրա:

Ընթերցողական հետաքրքրության ձևավորման նպատակներն են՝ դեպի գիրքը հետաքրքրության և ընթերցելու ձգտման ուղիների որոնումը, սովորողների ընթերցողական կարողությունների զարգացումը և հաճույքով կարդալու սովորություն դաստիարակելը, ստեղծագործական մրցույթների և բեմականացված պարապմունքների կազմակերպման համակարգի ստեղծումը և այլն:

Ընթերցողական հետաքրքրության ձևավորման աշխատանքն իրականացվում է մայրենիի դասերի , արտադասարանական ընթերցանության ժամերի, գրադարանի հետ համագործակցելով, ընտանեկան ընթերցանության ակումբների, գրական տոնահանդեսների կազմակերպման միջոցով: Ակտիվ ընթերցողի դաստիարակության գործում մեծ դեր ունի դպրոցական գրադարանը:

Արտադասարանական ընթերցանության դասերը լայն հնարավորություններ են տալիս երեխաների ստեղծագործական, ճանաչողական որակների զարգացման համար: Դրանք գրքերի քննարկումներն են, կոնֆերանսներն են, մրցույթները և այլն: Դրանք հետաքրքիր են անցնում և պարունակում են մեծ լիցք, եթե կազմակերպվում են ոչ թե աշակերտների համար, այլ նրանց ակտիվ մասնակցությամբ:

Աշակերտների ընթերցողական հետաքրքրության զարգացման հաջողությունը պայմանավորված է նաև այդ խնդրի լուծման գործընթացում ծնողների մասնակցությամբ: Երեխաները կարիք ունեն «ընթերցող» միջավայրի, գրական շրջապատի: Միայն այս դեպքում է առաջանում է կարդալու ցանկությունը, որը հետագայում դառնում է խորը հոգևոր պահանջմունք: «Կարդացող» միջավայրը պետք ստեղծվի նախ և առաջ ընտանիքում, և ուսուցիչը կարող է իր ներդրումն ունենալ այդ միջավայրը ստեղծելու գործում:

Կարելի է շաբաթը մեկ անգամ կազմակերպել այնպիսի մի դաս, որի ընթացքում աշակերտներից մեկը լինի ուսուցչի դերում, և դասի թեման լինի գեղարվեստական գրականությունից կարդացած որևէ ստեղծագործություն: Կարևոր է , որ ծնողները դառնան այդ դասի կազմակերպման մասնակիցը, դառնան իրենց երեխայի և նրա դասընկերների գործընկերը: Սրանով ընթերցողական մթնոլորտը կտեղափոխվի նաև ընտանեկան միջավայր: Ծնողի հետ միասին երեխան ընտրում է գրականությունը, միասին կարդում և

վերլուծում են, մտածում, թե ինչպես այն դասարանին ներկայացնեն: Ուսումնական տարվա վերջում ամփոփվում են արդյունքները, և «լավագույն դաս» ներկայացրած աշակերտը ճանաչվում է հաղթող: Այս աշխատանքը նպաստում է գրքի նկատմամբ հետաքրքրության սերմանմանը, ստեղծագործական ունակությունների զարգացմանը, խոսքի նկատմամբ հարգանքի ձևավորմանը, ծնողների և երեխաների միաբանմանը:

Մեթոդիստ Լ.Ն. Ռոժինան<sup>1</sup> գրում է, որ գեղարվեստական ստեղծագործության լիարժեք ընկալումը չի սահմանափակվում միայն կարդացածը հասկանալով:

Ներկայացնենք «մտախոհ ընթերցանության» կանոնը, որը ձևավորված է «երեք ո» բանաձևով՝

ԵՐԵՔ → վերապրի՛ր

→ պատկերացրո՛ւ

Ո՛ր → հասկացի՛ր

→ զգացմունքները

ԸՆԹԵՐՑԱԾԸ → կերպարները

→ մտքերը

Այսինքն՝ վերապրիր → պատկերացրու → հասկացիր → ընթերցածը քայլերը դառնում են ընթերցողական կարողությունների բաղադրամասերը: Ես կարծում եմ, որ գեղարվեստական ստեղծագործության լիարժեք ընկալումն իրականանում է երեխաների զգացմունքների, կերպարների, մտքերի միջոցով, որոնք առաջանում են դասի ընթացքում: Այս աշխատանքի կարևորությունը և նշանակությունը ակնհայտ է: Ասածը հաստատում են Ս. Լուպանի բառերը՝ «Ամենալավ նվերը երեխայի նրա՝ ընթերցանության ճաշակի զարգացումն է»:

<sup>1</sup> Л. А. МУЗЫКА, ИНТЕРЕС К ЧТЕНИЮ; КАК ЕГО ПРОБУДИТЬ?//НАЧАЛЬНАЯ ШКОЛА, 2007, N -6, стр. 72

## Ի՞նչ գիրք ընթերցել



Կրտսեր դպրոցում փոքրիկ ընթերցողն առաջին քայլերն է անում գրականության մեծ աշխարհ: Այդ ճանապարհին ուղղորդողներ են դառնում ծնողներ ու ուսուցիչները: Արդյո՞ք հաճախ ենք մեզ հարցեր տալիս.

- Ի՞նչ կտավորեցնի գիրքը երեխային:
- Ի՞նչը կտպավորվի նրա բաց հոգում:

«Մեզանից շատերին ավելի շատ անհանգստացնում է այն, թե ինչ գիրք են կարդում մեր երեխաները, քան որքան են կարդում:

Կրտսեր դպրոցում այս խնդիրների լուծման կարևոր գործոններն են ոչ միայն ուսուցչի մասնագիտական վարպետությունը, այլև նրա ընթերցողական նախասիրություններն ու կարդացած լինելը»<sup>2</sup>:

- Ինչի՞ց սկսել այդ աշխատանքը,- պատասխանն ակնհայտ է՝ քեզնից:

Ուսուցչին անհրաժեշտ է առաջին հերթին կարդալ այն մանկական գրականությունը, որն <sup>2</sup>

РЫБКИНА Е. А. <<ШАГ НАВСТРЕЧУ КНИГЕ, ИЛИ КАК ПРИОБИЦИТЬ РЕБЕНКА К ЧТЕНИЮ>> // <<НАЧАЛЬНАЯ ШКОЛА>> 2009, N 2, стр. 18



սկսում են ընթերցել աշակերտները, ինչպես նաև տեղեկանալ նոր գրքերի և հեղինակների մասին: Նա պետք է իմանա, թե ինչ է կատարվում մանուկների և մեծահասակների ընթերցողական աշխարհում: Այստեղ օգնության կարող են գալ աշակերտների և ծնողների համագործակցությունը դպրոցական, քաղաքային մանկական գրադարանների հետ և գրադարանների ինտերնետ կայքերի հաճախումները:

Որպեսզի տարրական դասարանների աշակերտներին օգնենք <<Գրքերի աշխարհում>> կատարել իրենց առաջին լուրջ քայլերը, որպեսզի այդ աշխատանքը հետաքրքիր, բազմազան և հրապուրիչ լինի, կարելի է ստեղծել ընթերցանության սիրահարների՝ <<Ընթերցող>> մանկական ակումբ:

Ակումբում կարելի է կազմակերպել ընթերցած ստեղծագործությունների քննարկումներ, գրքերի փոխանակություն, ընթերցողների միջև մրցույթներ, ընթերցողական օրագրերի նոթագրումներ: Այստեղ շատ կարևոր է, որ ակումբում հնարավորություն ընձեռվի շփվել հետաքրքիր մարդկանց, գրողների, լրագրողների հետ: Ակումբային աշխատանքի հիմքում ընկած կլինի լրացուցիչ կրթություն ստացող սովորողների, նրանց ծնողների, ուսուցիչների

գործունեության տարբեր ձևերի ներառումը: Կատարվող աշխատանքի նպատակը երեխաների կարդալու պահանջմունքների ձևավորումն է, ազատ ժամանակի մի մասը ընթերցողական գործունեությանը նվիրելը: Երբ աշակերտները մասնակցում են արտադասարանական գրական պարապմունքներին, ապա նրանց մեջ բարձրանում է ընթերցողական ինքնուրույնության գործակիցը:

Մեր առջև դաստիարակության գերխնդիր կա. ինչպե՞ս վարվել, որպեսզի կրտսեր դպրոցականը կարդա: Առաջին դասարանից աշակերտները սովորում են միասին կարդացածի շուրջ մտածել և քննարկել: Տարրական դասարաններում շատ նշանակալի կարող է լինել ճիշտ ընթերցողական օրագրի շուրջ կազմակերպված նպատակային աշխատանքը: Ընթերցողների ձևավորման սկզբնական փուլում, երբ երեխաներն իրենց առաջին քայլերն են կատարում, ծնողներին կարելի է առաջարկել << Ընթերցողի օրագիր>> վարել, որտեղ կնշվեն սիրված գրքերի վերնագրերը, կգրվեն այդ գրքի մասին տպավորությունները և այլն:

Սովորողներին կարելի է առաջարկել կարդացած ստեղծագործության վերաբերյալ օրագրում նկարագարդման աշխատանքներ իրականացնել: Ուսուցիչն անպայման պետք է լսի, թե ինչպես է երեխան պատմում իր կարդացածը, հայտնում իր կարծիքը: Ամենակարևորն այն է, որ ուսուցիչը պետք է ուշադիր հետևի, թե ինչ են կարդում երեխաները: Որպեսզի ձևավորվի երեխայի գեղագիտական ճաշակը, պետք է հատուկ ուշադրություն դարձնել նկարագարդման գեղագիտական մակարդակին: Ակտիվ կարդացողներին պետք խրախուսել: Մանկական կոլեկտիվում ընդօրինակման կերպար պետք է լինի կարդացող, մտածող աշակերտը:

## **ԽԱՂԸ ՈՐՊԵՏ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԹԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ**

Խաղը նրա, մանուկ մարդու բնական օրգանական

պահանջն է, նրա լրջությունն է, նրա էությունն է

### **Հ. Թումանյան**

Դպրոցում ուսուցչի աշխատանքի և աշակերտների ուսումնական հաջողությունների արդյունքները չափվում են ձեռք բերված գիտելիքներով, կարողություններով ու հմտություններով: Արդի ժամանակաշրջանում, երբ կյանքն օրեցօր առաջընթաց է ապրում, դպրոցի կարևորագույն խնդիրներից են դառնում աշակերտների ճանաչողական հետաքրքրությունների, նրանց ստեղծագործակալին մտածողության, ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողությունների ձևավորումն ու զարգացումը: Գիտելիքների գումարի յուրացումն ու մտապահումը, որոնք ավանդաբար համարվել են ուսուցման հիմնական նպատակ, այսօր վերածվել են ուսուցման հիմնական նպատակին հասնելու միջոցների:

Ուսուցման նպատակի նման ընկլումը չափազանց արդիական է և միաժամանակ ունի շատ խոր և հին արմատներ:

Ճանաչողական հետաքրքրությունների համար խթան կարող են դառնալ ուսուցումը հետաքրքիր դարձնելը, ուսուցման գործընթացում ստեղծագործական մթնոլորտի ապահովումը, ինչպես նաև բարդ, բայց հրապուրիչ խնդիրների առաջադրումը: Այդ նպատակով անհրաժեշտ է գտնել ուսուցման այնպիսի հնարներ, որոնք ոչ միայն ցանկալի ու

հետաքրքիր լինեն երեխաների համար, այլև ունենան ուսուցողական, ճանաչողական նշանակություն և միաժամանակ խթանեն աշակերտների ստեղծագործական միտքը:

Այդպիսի հնար է խաղը, որը հոգեհարազատ և սիրված է երեխաների կողմից: Ընդհանրապես փոքրիկների համար խաղը ճանաչվում է որպես գործունեության հիմնական ձև: Դիդակտիկայի մեջ, հատկապես կրտսեր դպրոցականների ուսումնական խնդիրները լուծելիս, կիրառվում են դիդակտիկ խաղերը: Այս մանկավարժական տեխնոլոգիան էապես կարևորվում է տվյալ տարիքային խմբի համար:

Կրտսեր դպրոցական տարիքի երեխայի համար առաջատար գործունեություն է սկսում դառնալ ուսումը: Բայց այդ դպրոցականը, որը դեռ երեկ տարված էր իր զվարթ խաղերով, չի կարող լիովին գերծ մնալ դրանցից: Այդ իսկ պատճառով, երբ ուսուցումը համեմվում է խաղերով դրանք երեխայի համար դառնում են ավելի հետաքրքիր, սրտամոտ և ցանկալի: Երբ խաղը մուտք է գործում կենդանի մանկավարժական գործընթացի մեջ, դասարանում ստեղծվում է մի նոր յուրահատուկ միջավայր: Եթե ուսուցիչ աշակերտ կամ աշակերտ – աշակերտ հարաբերություններում մինչև այդ գոյություն ունեին ինչ – ինչ խանգարող հանգամանքներ, ապա դրանք անսկատելիորեն անհետանում են: Այդ մթնոլորտը հնարավորություն է տալիս, որ աշակերտները անկաշկանդ արտահայտեն իրենց մտքերը: Խաղն ունի մի այնպիսի հիանալի հատկություն, որ երեխային կարող է իր համար էլ անսկատելիորեն ընդգրկել ակտիվ ուսուցման և նույնիսկ այսկամ այն խնդրի լուծման ընթացքի մեջ: Խաղի ժամանակ երեխան ավելի է կենտրոնանում՝ տարվելով հետաքրքրաշարժությամբ, և ավելի հեշտությամբ էլ մտապահում է առաջին անգամ տեսածն ու լսածը:

Այսպես, օրինակ, առաջին դասարանցին տառուսուցման կամ էլ թվերի ուսուցման ժամանակ ծանոթանում է մի այնպիսի տառի կամ թվի, որն ունի բերան, աչիկներ ու թաթիկներ, խոսում է երեխաների հետ և պատմում իր մասին: Երեխաները սեղմում են նրա թաթիկը, բարևում և խոստանում չնեղացնել և չմոռանալ նրան: Փաստորեն երեխաները հաղորդակցվում են տվյալ տառի կամ թվի հետ, որից հետո, երբ տարբեր նյութերից պատրաստում են իրենց «նոր բարեկամին», ապա հեշտությամբ և հաճույքով մտապահում են նոր տառը կամ էլ թիվը: Այդ դեպքում յուրացումն իրականանում է գրեթե ինքնըստինքյան:

Դպրոցում կենդանի մանկավարժական գործընթացում խաղերը չեն կարող ինքնանպատակ լինել: Խաղ պետք է հանդես գա ոչ թե որպես առանձին հնար, այլ միաձույլ լինի ուսուցմանը և

ծառայի ուսումնական նպատակին: Հարկավոր է երեխաների մեջ արթնացնել հետաքրքրություն և այդ կերպ նպաստել մանկավարժական խնդիրների լուծմանը:

Ինչպես ցանկացած հնար, ուսումնական տեխնոլոգիա, այնպես էլ հետաքրքրաշարժության տարրերով հարուստ խաղը կարող է նույնիսկ ձանձրացնել երեխաներին, եթե չփոփոխվի ու անընդհատ կրկնվի նույնությամբ: Այդ իսկ պատճառով խաղը պետք է կիրառվի ստեղծագործաբար: Ցանկացած խաղ ցանկալի է տեսնել ոչ թե անխախտ կադապարի, այլ աստիճանական զարգացման մեջ, որպեսզի երեխայի մեջ չկորչի հետաքրքրությունը թե՛ դրա և թե՛ ուսուցան նկատմամբ: Ուսուցանող խաղերը, հետաքրքրաշարժ առաջադրանքները, սևեռում են երեխայի անկայուն ուշադրությունը դասի ընթացքին, տալիս են նոր գիտելիքներ, ստիպում են լարված մտածել: Խաղերը երեխաներից պահանջում են հնարամտություն, ուշադրություն, համատեղ ստեղծագործական համառություն, զարգացնում են երևակայությունը, արագորեն ճիշտ լուծումներ գտնելու կարողությունները: Կարևոր է նաև այս ամենի դաստիարակչական կողմը, քանի որ այդ ընթացքում երեխաները մոտիկից առնչվում են, մրցակցում, վիճում, իրար օգնում, դառնում են ինքնուրույն և ընկերասեր: Խաղերը միայն դասը հետաքրքրաշարժ, զվարճալի ու բազմերանգ դարձնելու համար չեն միայն, դրանք առաջին հերթին ուսանելի են և նոր գիտելիքներ են հաղորդում, սովորեցնում միտքը լարել, տրամաբանել: Խաղերը զարգացնում են երեխայի երևակայությունը, արագորեն լուծումներ գտնելու կարողությունը, համակցված մտածողությունը: Երեխային մտավոր աշխատանքի տրամադրել համար անհրաժեշտ է խաղը դարձնել հետաքրքիր, զբաղեցնող, միտք շարժող: Դրա համար կան տարբեր եղանակներ ու մեթոդներ, որոնց մեջ հատուկ տեղ են զրավում դիդակտիկ խաղերը: Այդ խաղերի ճիշտ կազմակերպումն ու անցկացումը երեխաներին հնարավորություն է տալիս խաղի, խաղային ձևի միջոցով ստանալ անհրաժեշտ գիտելիքներ, իսկ դաստիարակին՝ զարգացնել երեխաների մտավոր գործունեության տարբեր կողմերը:

Երեխաների գիտելիքների ամրապնդման, նոր գիտելիքների հաղորդման նպատակով մանկապարտեզի կրտսեր խմբից սկսած անցկացվում են դիդակտիկ խաղեր: Քանի որ երեխաների ուշադրությունը, հիշողությունը և հոգեկան մյուս պրոցեսները դեռ այնքան զարգացած չեն, որպեսզի կիրառվեն ուսուցման առավել բարդ ` դպրոցական մեթոդներ, դիդակտիկ խաղերի օտագործումը լիովին համապատասխանում է նրանց տարիքային առանձնահատկություններին և մտավոր կարողություններին: Այդ խաղերը որպես ուսուցման ձև, իրենց բնույթով բարդ են, որովհետև դրանք միաժամանակ հետապնդում են

երկու նպատակ՝ ուսուցողական և խաղային: Այստեղ երեխաները խաղալով սովորում են, իսկ դաստիարակը ղեկավարելով և մասնակցելով խաղին՝ միաժամանակ սովորեցնում է: Դաստիարակի այս դերն առանձնապես ընդգծվում է, երբ դիդակտիկ խաղերը հանդես են գալիս որպես նոր գիտելիքների հաղորդման միջոց: Այսինքն՝ երբ խաղի ընթացքում երեխաները միմյանց չեն հասկանում, դաստիարակը ոչ թե ուղղակի ասում է ինչ անել, այլ ինքը խաղի մեջ մտնելով՝ երեխային ճիշտ արտահայտվելու և ճիշտ գործելու օրինակ է տալիս:

## **Ընթերցանության զարգացումը խաղի միջոցով**

Աշակերտների մեջ գրքի նկատմամբ սեր կարելի է սերմանել խաղերի, հետաքրքրաշարժ վարժությունների միջոցով:

Ներկայացնենք մի քանի խաղ:

### **<<Պահմտոցի>>**

Աշակերտներից մեկը կարդում է դասագրքի ստեղծագործություններից որևէ տող՝ նշելով միայն էջը: Մյուսները պետք է կռահեն ստեղծագործությունը, որոնքն համապատասխան հատվածը և հետևեն կարդացողին:

### **<<Երևակայական բառ>>**

Ուսուցիչը կարդալու ժամանակ օգտագործում է սխալ բառեր, աշակերտները պետք է լսեն և արտաբերեն բառի ճիշտ ձևը:

Այս խաղը երեխաները հաճույքով են խաղում, քանի որ նրանք հնարավորություն են ունենում ուղղել ուսուցչուհուն, ով բարձրացնում է իրենց հեղինակությունը և տալիս է ինքնավստահություն:

Ակտիվ գործունեության ձևերից է մրցակցությունը:

### **<<Ուրախ սագր>>**

Խաղը անցկացվում է դասարանում: Այն ընթերցանությունը վերածում է գրավիչ խաղի: Խաղի էությունը հետևյալն է: Գեղարվեստական տեքստից տասը էջ ինքնուրույն կարդալուց հետո աշակերտը գունավոր թղթից կտրում է շրջաններ: Այնուհետև պատկերում է գլխավոր հերոսի դեմքը: Գունավոր հատվածում գրում է գրքի անունը,

հեղինակի ազգանունը և սոսնձում սագի գլխին: Կարդալով հաջորդ տասը էջը՝ աշակերտն այդ շրջանակին ավելացնում է ևս մեկ շրջանակ և այդպես շարունակ... Այդ ձևով ստեղծվում է շղթա: Կարծությունը սովորեցնում է արագ կարդալ, ձևավորվում է հետաքրքրություն կարդալու նկատմամբ:

Վ. Ա. Սուխումլինսկին գրել է. «Կարդալը պատուհան է, որի միջից երեխաները տեսնում և ճանաչում են երկիրը և իրենք իրենց: Այն բացվում է երեխայի առաջ միայն այն ժամանակ, երբ դրա հետ և անգամ ավելի շուտ՝ մինչ գրքի առաջին բացելը, սկսվում է մանրակրկիտ աշխատանք բառերի հետ»:

Միայն դպրոցի և ընտանիքի համատեղ ուժերով կարելի է հասնել նրան, որ երեխան սիրի գիրքը: Կարդալը պետք է սկսել շապիկից և տիտղոսաթերթից: Չէ՞ որ գրքի նկատմամբ հետաքրքրությունը ծնվում է գրքի հետ հենց առաջին շփումից:

### **Խաղ՝ «Օգնիր հերոսին գտնել իր հեքիաթը»**

Սովորեք ճանաչել հեքիաթը՝ կարդալով դրվագը:

Նպատակները:

- 1) երեխաների մեջ սերմանել բանավոր ժողովրդական արվեստի հանդեպ սեր.
- 2) զարգացնել երեխաների գիտելիքները հեքիաթների մասին.
- 3) Սովորեք հիշել հեքիաթների հերոսներին, նրանց անունները, կերպարները, արտաքինը:
- 4) ձևավորել հետաքրքրություն ընթերցանության նկատմամբ

Մանկավարժ. «Մի անգամ բոլոր գրքերը որոշեցին խաբել տղաներին և շփոթվեցին էջերից: Եվ հետո նրանք չկարողացան վերադառնալ իրենց հեքիաթներին: Ձեր օգնությունը շտապ անհրաժեշտ է: Ես ձեզ հեքիաթներից հատվածներ կկարդամ, իսկ դուք ասեք, թե որ հեքիաթից է կարդացվել հատվածը: Եթե ճիշտ պատասխանենք, ուրեմն բոլոր հեքիաթները կվերականգնվեն:

Ուսուցիչը կարդում է հեքիաթների հատվածներ, գրքերը դնում գրատախտակին:

Մանկավարժ: Օ՛, դժվարություն: Հեքիաթների հերոսներն ընկել են գրքերից և կորել: Օգնեք նրանց մտնել իրենց հեքիաթների մեջ:

Երեխաները ճանաչում են հեքիաթների հերոսներին, անվանում և համառոտ նկարագրում նրանց, գտնում են այն գիրքը, որտեղ նրանք ապրում են: Հերոսները «տեղավորվում են» իրենց հեքիաթներում: Հաղթում է այն թիմը, որը գուշակում է ամենաշատ հերոսներին:

<p><b>Վերջնարդյունքները</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Կկարողանա սահուն, արտահայտիչ և հասկանալով ընթերցել տեքստը</li> <li>• Կհմանա դասական և քանակական թվականները</li> <li>• Կկարողանա կապակցված խոսքով նկարագրել , բանավիճել, հիմնավորել ասածը</li> <li>• Կկարողանան վեր հանել , բացահայտել առակի հիմնական գաղափարը</li> <li>• Կկարողանա մասնակցել դերային խաղին, բեմադրությունների ժամանակ կատարել հերոսների դերերը</li> <li>• Վերաբերմունք կդրսևորի տեքստի հերոսների քայլերի նկատմամբ</li> </ul>
---------------------------------	---

<p><b>Դասի ընթացք/ ընտրված մեթոդներ</b></p>	<p><b>Խթանում /5 բույե/</b>  <b>«Հասկացությունների քարտեզ» մեթոդական հնար</b>  <b>Հարցադրումների միջոցով աշակերտներին հիշեցնել, թե որ ժանրին են պատկանում «Ճպուտն ու մրջյունը», «Առյուծն ու մուկը», «Այրի կինը և որդին» ստեղծագործությունները /առակ/:</b> Ապա առաջարկել գույգերին իրենց տրված ծրարներից ընտրել այն բառերն ու արտահայտությունը, որոնք առնչվում են «առակ» հասկացության հետ: Զույգերն ընտրում են համապատասխան բառերն ու արտահայտությունները և կազմում հասկացությունների քարտեզ: Քարտեզը կազմում են հետևյալ կերպ:</p> <pre> graph LR     A[Առակ] --- B[սյուժե]     A --- C[արձակ]     A --- D[բարոյախոսություն]     A --- E[գրական ժանր]     A --- F[չափաժո]     B --- B1[անձնավորում]     B --- B2[գլխավոր հերոսներ]     C --- C1[Եզրայուս]     D --- D1[առակի սկզբում]     D --- D2[առակի վերջում]     F --- F1[Աթարեկ Խնկոյան]     F --- F2[Դովհաննես Թումանյան]   </pre>
---	--

**Իմանտի ընկալում /30 րոպե/**

**Տեքստի բովանդակության կանխագուշակում**

- Գրատախտակին փակցնել հետևյալ առածը  
«Մի գնդակով երկու նապաստակ չես խփի»

Հարցերի օգնությամբ առածի միջոցով աշակերտները կկանխագուշակեն «Առյուծն ու մուկը» առակի բովանդակությունը: «Հինգրոպանոց ազատ շարադրանք» մեթոդի կիրառմամբ աշակերտները կշարադրեն իրենց մտքերը:

**Տեքստի լուռ ընթերցում**

Լուռ կընթերցեն «Առյուծն ու մուկը» առակը , կպատասխանեն հարցերին և կհամեմատեն իրենց ենթադրությունները տեքստի բովանդակության վերաբերյալ, կկատարեն տեքստի բովանդակության շուրջ վերլուծություններ և եզրակացություններ:

**«Լրագրողներ» խաղի կազմակերպում**

Այս խաղի ընթացքում բոլորը, ովքեր ցանկանում են հանդես գալ հերոսների դերում, հրավիրում են գրատախտակի մոտ, իսկ մյուսները հանդես են գալիս լրագրողների դերում: Վերջիններիս խնդիրն է տալ հետաքրքիր, ոչ ստանդարտ հարցեր հերոսներին: Իսկ առակի հերոսները պետք է կարողանան լիարժեք, հստակ պատասխաններ տալ հարցերին:

**Աշխատանք լեզվական նյութի շուրջ**

Թվականի մասին պատկերացումների խորացման ու ամրակայման համար կատարել խաղ-վարժանք:

Գնդակը նետել աշակերտներից որևէ մեկին և արտաբերել որևէ քանակական կամ դասական թվական: Եթե դասական թվական է ասում, ապա այն աշակերտը, որը բռնել է գնդակը, այն դարձնում է քանանական թվական, իսկ եթե քանակական թվական է ասում, ապա այն դարձնում է դասական թվական և գնդակը հետ են շարտում:

**Կշռադատում /10 րոպե/**

**Դերային խաղ- Բեմականացնել առակը**

**Անդրադարձ և ամփոփում**

«Ընթերցողից պատասխան ակնկալող հարցեր» մեթոդական հնարի կիրառում

- Ի՞նչ նկատեցիք տեքստում
- Ինչի՞ մասին այն ստիպեց մտածել
- Ո՞րն է տեքստի ամենակարևոր ասելիքը
- Ո՞րն է տեքստի ամենակարևոր նախադասությունը



	<ul style="list-style-type: none"> <li>• Ո՞րն է տեքստի ամենակարևոր բառը</li> <li>• Կկիրառեմ ԳՈՒՍ մեթոդը:</li> </ul> <table border="1" data-bbox="456 262 1328 485"> <tr> <td data-bbox="456 262 743 373">Գիտեմ</td> <td data-bbox="743 262 1031 373">Ուզում եմ սովորել</td> <td data-bbox="1031 262 1328 373">Սովորել եմ</td> </tr> <tr> <td data-bbox="456 373 743 485"></td> <td data-bbox="743 373 1031 485"></td> <td data-bbox="1031 373 1328 485"></td> </tr> </table>	Գիտեմ	Ուզում եմ սովորել	Սովորել եմ			
Գիտեմ	Ուզում եմ սովորել	Սովորել եմ					
<b>Ընտրված մեթոդներ</b>	<b>Խթանում- «Հասկացությունների քարտեզ»</b> <b>Իմաստի ընկալում-Կանխագուշակման մեթոդ</b> <b>Կշռադատում- Ընթերցողից պատասխան ակնկալող հարցեր, ԳՈՒՍ</b>						
<b>Տերմիններ</b>	Խրատ, բարոյախոսություն						
<b>Գնահատում</b>	<p>Գերազանց կգնահատեմ այն աշակերտներին, ովքեր դասի բոլոր փուլերում կցուցաբերեն ակտիվ մասնակցություն , հարցերին կտան հստակ, կապակցված, ճիշտ պատասխաններ:</p> <p>Լավ կգնահատեմ այն աշակերտներին, ովքեր դասի բոլոր փուլերում կցուցաբերեն ակտիվ մասնակցություն , բայց հարցերին կտան ոչ լիարժեք պատասխաններ:</p> <p>Բավարար կգնահատեմ այն աշակերտներին, ովքեր դասի բոլոր փուլերում կցուցաբերեն ոչ ակտիվ մասնակցություն, հարցերին կտան թերի, չկապակցված պատասխաններ:</p>						
<b>Տնային աշխատանք</b>	Կարդալ և վերարտադրել առակը, տեղեկություն հավաքել առյուծի մասին , առաջադրանք 1						

## Գործնական աշխատանք

Ստորև ներկայացրած խաղը կիրառել եմ դասարանում: Աշակերտները մեծ հետաքրքրությամբ մասնակցեցին խաղին: Խաղը կազմակերպեցի խմբերով:

Դասարանը բաժանեցի երեք խմբի: Խմբերին հանձնեցի ծրարներ, որոնք պարունակում էին տարբեր հեքիաթներից նկարներ և նախադասություններ: Աշակերտները կարդալով նախադասությունները, վերհիշելով հեքիաթները, համապատասխանաբար նկարներին փակցրեցին նախադասությունները: Հաղթեց այն թիմը, որը առաջինը և ճիշտ ավարտեց աշխատանքը:

ԽԱՂ 1. «Ո՞ւմ խոսքերը».

Զորավարժություններ «Ո՞վ է ասում այս խոսքերը»:

«Մի նստիր ծառի կոճղի վրա, մի կեր կարկանդակ » - Մաշա




«Ո՞վ նստեց իմ աթոռին ու ջարդեց այն»:




«Փրկիր մեզ, գորշ գայլը մեզ կերավ» - Այծեր.



«Ես թողել եմ տատիկիս, թողել եմ պապիկիս, իսկ քեզնից, և առավել ևս ես գնալու եմ»:



## Հարցում՝ « Ի՞նչ միջոցներով եք խթանում ընթերցանությունը»



Անցկացրել եմ հարցում տասը դասվարների շրջանակում՝ «Ի՞նչ միջոցներով եք խթանում աշակերտի հետաքրքրությունը ընթերցանության նկատմամբ»: Հարցին դասվարներից 4-ը ( 40%) նշել են խաղեր , 1-ը ( 10%)՝ առաջադրանքներ, 2 –ը (20%)՝ ղիղակտիկ պարագաներ, 1-ը (10%)՝ դաս-էքսկուրսիաները և 2-ը ( 20%)՝ այլ տարբերակ՝ նշելով, որ կարևոր միջոցներ են համարում ն՝ խաղերը, և՛ առաջադրանքները: Հարցումից հետո հանգեցինք այն եզրակացության, որ ավելի շատ խաղերի միջոցով կարելի է ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն ձևավորել՝ հաշվի առնելով երեխաների տարիքային առանձնահատկությունները:

## Եզրակացություն

Այսպիսով՝ ընթերցանության ձևավորումն ու զարգացումը կրտսեր դպրոցում խաղի միջոցով ունի շատ մեծ և կարևոր նշանակություն:

Այս աշխատանքի միջոցով պարզեցինք ընթերցանության կարևորությունը, ընթերցողական հետաքրքրությունների ձևավորումը, ի՞նչ գիրք ընթերցել, խաղի միջոցով ընթերցանության զարգացումը:

Կրտսեր դպրոցում աշակերտների համար անհրաժեշտ է ընթերցանության առկայությունը: Կրտսեր դպրոցը պետք է նպաստի աշակերտների ինքնուրույնության զարգացմանն ուսումնառության ընթացքում, միաժամանակ սովորեցնի հաղորդակցվել ու համագործակցել դասընկերների հետ, զարգացնի աշակերտների տրամաբանական մտածողությունը: Այդ ամենը արդյունավետ իրականացնելու համար մեծ դեր ու նշանակություն ունի ընթերցանությունը: Սակայն նախ և առաջ պետք է աշակերտների մեջ ձևավորել ընթերցանությանը տիրապետելու կարողություններ, հետաքրքրասիրություն դեպի ընթերցանությունը:

Ընթերցանության շնորհիվ զարգանում է երեխայի խոսքը, ավելանում է նրա բառապաշարը: Գիրքը փոքրիկ ընթերցողին սովորեցնում է արտահայտել իրենց մտքերը և հասկանալ, թե ինչ են ասել ուրիշները:

Գրքի հետ աշխատանքը խթանում է ստեղծագործ երևակայությունը, զարգացնում ճանաչողական հետաքրքրությունները, ընդլայնում նախադպրոցական երեխայի հորիզոնները: Երեխան իր էությանը զգացմունքային է, նրան գրավում է ամեն պայծառ ու գեղեցիկ: Ուստի երեխային ընթերցանության համար անհրաժեշտ է գունավոր գրքեր ընտրել: Երեխան պետք է իմանա, թե ով է գրել գիրքը և ով է նկարագարել այն, որ հեղինակի և նկարչի համատեղ ստեղծման շնորհիվ գիրքը արվեստի գործ է:

Ինչպես մենք իմացանք ընթերցողական կարողությունների զարգացման կարևոր գործոններից է խաղը: Խաղերը նպաստում են կրտսեր դպրոցական տարիքի աշակերտների հաղորդակցական հմտությունների, տրամաբանական մտածողության զարգացմանը: Դրանք աշակերտների առօրյան դարձնում են բովանդակալից, նրանց մեջ մշակում են շփման ունակություններ և զարգացնում են մտածողությունը, խոսքը:

Կրտսեր դպրոցում ընթերցանության միջոցով է իրականացվում բնագրի հետ աշխատանքը: Այդ բնագրերից են հեքիաթները, գեղարվեստական այլ ստեղծագործություններ, որոնք մեծապես նպաստում են աշակերտների մեջ ընթերցանության ձևավորմանը:

Ընթերցանության միջոցով աշակերտները շատ գիտելիքներ են ձեռք բերում:

Այսպիսով՝ ընթերցանության դերը մեծ է կրտսեր դպրոցում, կարևոր է, որ այն ճիշտ և նրանց տարիքին համապատասխան կառուցվի:

## Օգտագործած գրականություն

1. НАЧАЛЬНАЯ ШКОЛА. 2007. N – 6.
2. РЫБКИНА Е. А. \_ <<Шаг навстречу книге, или Как приобщить ребенка к чтению>> // <<Начальная школа>> 2009 N 2.
3. Գյուլամիրյան Ջ. Հ. , Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, <<Զանգակ – 97>>, 2006:
4. Տեր-Գրիգորյան Ա. Ե., <<Ընթերցանության մեթոդիկա>>, <<Լույս>>, 1987:
5. Կարինե Թորոսյան, Կարինե Զիրուխյան, Աստղիկ Բալայան «Ինչպես պլանավորել մայրենիի դասը» «Զանգակ», 2017
6. Դավիթ Գյուրջիյան, Նարինե Հեքեքյան , Մայրենի 4, Մեթոդական ուղեցույց, Էդիտ Պրինտ , 2009թ.